# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2020թվականի N 076

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04.02.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 012 ԵՎ 06.02.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 016 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի ղեկավարի 04.02.2020թվականի <<Արենի համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքերը ավելի բարձրարժեք հողատեսքերի փոխադրելու մասին>> թիվ 012 որոշման վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

<<Արենի համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքերը ավելի բարձրարժեք հողատեսքերի փոխադրելու և բնակավայրերի նշանակության հողամասերի գործառնական նշանակությունը փոխելու մասին>>

2. Արենի համայնքի ղեկավարի 06.02.2020թվականի <<Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Գագիկ Ստեփանյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության ցածրարժեք հողատեսքերը ավելի բարձրարժեք հողատեսքերի փոխադրելու մասին>> թիվ 016 որոշման վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

<<Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Գագիկ Ստեփանյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.00888հա հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին>>:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**